

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՈՒՒՏԱՎՈՐԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՍՈՒՄ

ԽԱՅՔԻ ՍԹՈՈՒՆ (Երուսաղեմ)

1996—1997 թթ. ձմռանը Յաֆայի դարպասների արտաքին կողմում հնա-
պեաները (է. Շուրբունի խումբ) պեղեցին ուխտավորների մի իջևանատուն:
Լջևանատան պեղումը մաս է կազմում Ռ. Թեյլի ղեկավարությամբ Իսրայելի
հնագիտական վարչության կողմից իրականացվող Երուսաղեմի շրջակայքի
պեղումների ընդարձակ մի ծրագրի: Է. Շուրբունը ցուցադրեց տեղում հայտա-
նայնրված հայերեն արձանագրությունը, հասու գարձրեց իսձ և այժմ այն
ուսույրվում է առաջին անգամ:

Պեղված կառույցը լքված է եղել VII դարի կեսին: Հնադեաները տեղե-
կացրին ինձ, որ այս թվագրումը միանգամայն ստույգ է: Այն քրիստոնեական
շինություն է եղել, որը, սակայն, արտաքուստ կից է Երուսաղեմի քաղաքա-
յին պարսպին և Բեթղեհեմ տանող ճանապարհի սկիզբն է: Հայերեն արձա-
նագրությամբ մարմարյա սալաքարի բեկորը գտնվել է այս կառույցում, որը,
ինչպես սովեց, ուխտավորների իջևանատուն է ենթադրվում: Սալաքարը չի
կրում մաշվածրի նշաններ և, հավանաբար, մաս է կազմել Լրեսապատված-
րի: Ուստի արձանագրությունը թվագրվում է VII դարի կեսից այվի վաղ՝
նախքան կառույցի լքումը:

Ստորև տալիս ենք արձանագրության ընթերցումը՝ մի շարք դիտարկում-
ներով, որոնք թույլ կապն ղետեղել այն պատմական իր կոնտեքստում:

Առարկայական եկարագրություն

Քարը ուպիտակ մարմար է, մուգ երկայնական զծերով, ինչը զժվարաց-
նում է երկրորդ տողի վերջնամասի վերձանումը: Քարի շափերն են՝ 12,5×
5,7 սմ, գրության շափերը՝ 4×7 սմ: Արձանագրությունը բաղկացած է շորս
տողից. 1-ին տողը ունի 5,6 սմ երկարություն և ամենաբարձր տառը՝ 0,9
սմ է, 2-րդ տողի երկարությունը 5,4 սմ է և ամենաբարձր տառերը՝ 3 և Բ,
0,9 սմ են: 3-րդ տողի երկարությունը 5,4 սմ է, ամենաբարձր տառը՝ 1 սմ:
4-րդ տողը թերի է: Պահպանված շորս արձանագրի գրեր ունեն 2,2 սմ եր-
կարություն, իսկ մեջտեղի երկու տառերը՝ 0,9 սմ բարձրություն: Քարը երկու
կրերից կտրված է, և ամենեին անվերապահ չէ, թե կասկածանք հարուցող
վերջին տողը շարունակություն է ունեցել:

Վիձագիրը ընդհանրապես յավ է պահպանված: Բվում է, փորագրողը
հմուտ չի եղել, քանզի 1-ին և 3-րդ տողերում այլ-ի գրության ձևերի միջև
շեղումներն ակնհայտ են: Մյուս կողմից, ինչպես կատարված գրությունից

1 Պեղումների արդյունքները կհրատարակվեն Իսրայելի հնագիտական վարչության կող-
մից: Բնական է, որ հրատարակությունը հնագիտական և պատմական լիարժեք տեղեկություն
կապահովի այն շրջանի մասին, որ արձանագրությունը գտնվել է: Այստեղ բերված տվյալ-
ները համաձայնեցված են Ռ. Թեյլի և է. Շուրբունի հետ:

է հրկում, նա անշուշտ դրագետ է եղել², Հարկ է դիտել, որ զրուսթյունը ավելի ձեռագրական է, քան վիմագրական³:

ՏՐ ՈՂՈՐՄԵԱ
ՏՐՏՐՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ
ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՅԻՇԵԱԿ

Դիտողություններ բնագրի վերաբերյալ

Տող 1. ՏՐ «Տէր». հապավում է՝ առանց հապավման նշանի: Հաջորդ տողի ՏՐՏՐՈՅ «Տիրատրոյ» անունը հապավված է, հապավման նշանը նույնպես բացակայում է: ՈՂՈՐՄԵԱ բայական ձեր ողորմիմ-ի հրամայականն է: Տող 2. ՏՐՏՐՈՅ «Տիրատրոյ». նմանատիպ բնագրերում այսչափ կարուկ հապավումը և մասնավորապես ա-ի զեղջումը սովորական չէ: Անունը բաղկացած է տէր+տուր (տայ) բառերից և համեմատելի է Աստվածաւանդի, Քրիստոսաւանդի, ինչպես նաև հունարենի Թեոդորոսի, եբրայերենի Հովնաթանի հետ և այլն. Հայերեն անձնանունների բառարանում Տիրատուրի առաջին վկայություն ունենք 633 թ., որ կրում է Կարնո ժողովի մասնակից մի արքեպիսկոպոս⁴: XIII դարի վերջերից անունը սկսում է հաճախակի հիշատակվել: 2. Աճատյանի բառարանում անվան մինչև XIII դարը միայն մեկ հիշատակումը վկայում է, որ վաղ շրջանում այն լայն տարածում չի ունեցել: Սակայն հայերեն գրերի գլուխին հաջորդած առաջին դարերի շատ արձանագրություններ չեն պահպանվել:

Տող 2—3. ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ. Ուշագրություն անենք, որ բառերից և ոչ մեկը հապավված չէ: ՍՈՒՐԲ բառի ընթերցումը թեև մարմարի մուգ երկայնական գծերի պատճառով մասամբ մթազնվում է, բայց կասկած չի հարուցում: Ծարագասությունը միանգամայն հստակ է, բանգի Տիրաւուր անունը որված է տրական հոլովով (Տիրատրոյ), որը, ինչպես և պետք է սպասվեր, հետևում է ողորմիմ բային, մինչդեռ սուրբ յարութիւն-ը ուղղական հոլովով է՝ /յ/իշեա-ի ենթական:

Այսպիսով, Տիրոջն աղերսվում է ողորմելի Տիրատուրին և սուրբ Յարութիւն-ին՝ հիշատակել ոմնի: Բայց ի՞նչ կարող է նշանակել այս երկրորդ աղերսը՝ հստակ չէ, և երբ ևս խորհրդակցեցի գործընկերներս հետ, ինձ առաջարկվեց երկու մեկնաբանություն: Ի. էրվինը գտնում է, որ սուրբ Հարութիւն կնշանակի Քրիստոսի հարություն և այն վերաբերում է Սուրբ Անաստաս եկեղեցուց տաս րոպե հեռավորության վրա գտնվող և հայերենում Սուրբ Հարություն կոչվող եկեղեցուն: Սրբավայրին մերձակա շրջաններում ուխտավորական արձանագրությունների կազմումը և այդտեղ տեղի ունեցածի հիշատակումը միանգամայն բնական են թվում: Ուստի այլ օրինակներ ևս կարող են գտնվել: Այսպես, Քրիստոսի հարության դիմող աղերսի արտաստվողությունը կարող է հասկացվել միայն տվյալ տեղանքի թելադրանքի ներքո, որտեղ արձանագրությունը կազմվել է:

Դ-ը Դի Սեզնին ինձ առաջարկել է հենվել Սուրբ Երկրից գտնված հունարեն մակագրությունների ուսումնասիրման իր մեծ փորձի վրա՝ Սուրբ Հարություն-ը սրբանուն է: Նա այդ համեմատելի է նկատում հունական այն

² Անունը մատնացուցում է, որ արձանագրություն կազմողը նա է:

³ Սրանց տարրերության և նշանակության մասին տե՛ս N. Sionce. Three Observations on Early Armenian Inscriptions from the Holy Land, From Byzantium to Iran: In Honor of Nina Garsoian ed. R. W. Thomson and J.-P. Mahé (Atlanta: 1996), 419—420.

⁴ Տե՛ս 2. Աճատյան. Հայերեն անձնանունների բառարան:

արձանագրութիւններին հետ, որոնք առ սուրբ բարեխոսական աղերսանք են բովանդակում⁵:

Ի-ր Դի Սեղնիի բացատրութիւններն ուշագրավ են Սուրբ Երկրի հունական և հայկական մակադրութիւնների կազմութիւնն առանձին համանմանութիւնների դիտարկման առումով: Սվ սակայն, երկու դժվարութիւն է հանդիպում. նախ՝ նման անունով հայոց սուրբ շկա և, ավելի, իբրև անձնանուն Հարությունը մինչև XIV դարը չի հասնիլու: Երկրորդն այն է, որ առ սուրբ աղերսի այս ձևը Սուրբ Սրկրում գտնված որևէ մեկ այլ արձանագրութեամբ հայտնի չէ:

Իւրեւս մեկը կցասկանա համեմատել Զիթենյայ լեռան խճանկարի արձանագրութեան ընդհրր, որը պայմանականորեն թվագրվում է VI դարով. որ կարգացվում է. «ԲԱՐՆԱԿԻՍ ՈՐՆԱԿՈՎ ԱՄ ԱՄՍՈՒՍՅԱՅ ՁՍՈՒՐԻ ԷՍԱՅՐ ԵՐ ԶԵՐՄԵՆԻՐ ԶԱՐՍՍ, ԵՍ ՎԱՂԱՆ ԱՐԱՐԻ ՎԱՍՆ ԻՈՂՈՐԻՄԵԱՆ ՄԵՂԱՅ ԶԷՇԱՍԱԿԱՐԱՆՍ ՁԱՅՍ»:

Այստեղ սուրբ-ը և սրբի աղերսանքը ունենք իբրև բաբխոս: Բաբխոսաբանով խճանկարում օգտագործված է նույն բանաձևը, որով հետագա գարերի լինթացրում հայերը հաճախակի էին դիմում Սուրբ Խաչին⁶:

Զիթենյայ լեռան խճանկարը, ապա և Սուրբ Երկրի հունարեն և հայերեն արձանագրութիւնների նմանութիւնը կարող են ստիպել մեզ առավել լուրջ մտանալ դ-ր Դի Սեղնիի առաջարկին: Այնուհետև, եթե ըսք. Հարությունը արդեն բարեխոսում էր, ապա, անշուշտ տարօրինակ է, որ Հարություն անունը այդքան ուշ է հանդիպում Հայաստանում: Իրոք, Անաստասիոս ('ԱՆՏՏԵՅՍՈՍ) ա. ունը հունարենում շատ է տարածված և, ինչպես մատնանշում է Հ. Աճառյանը, հայերենում այն դրադարձաբար ներկայացված էր Անաստաս ձևով⁸: Բյուզանդական հունարենում այն գալիս է կայսերի, պատրիարքների և պապերի անուններից՝ Անաստասիոս I՝ 458—478 թթ. Սրուսաղևմի հույն պատրիարքն էր, Անաստասիոս II՝ 639(?)—706 թթ. Սրուսաղևմի հույն պատրիարքը: Հայերն այս անունն օգտագործում էին VI—XIV դարերում: Հետագայում այն հայերեն թարգմանվեց իբրև Հարություն, իսկ հունական ձևը դուրս մղվեց⁹: Հայերենում Անաստաս անվամբ Հ. Աճառյանի թվարկած նշանավոր անձանցից են՝ կաթողիկոս Անաստաս I Ակոռեցիս (661—667), Սուրբ Երկրում հայ եկեղեցիների և վանքերի հայտնի ցուցակի հեղինակ Անաստաս վարդապետը¹⁰ և Աղվանքի կաթողիկոս Անաստասը (742—746)¹¹:

Հետևելով դ-ր Դի Սեղնիի մեկնաբանութեանը, պետք է ենթադրենք, որ ա) զա հայերին նույնութեամբ անցած հույն սրբի անուն է, բ) Սրուսաղևմում

5 Ինձ տոտիկ մատչելի դարձնելու համար նա վկայակոչեց մի շարք օրինակներ: Բայ-մաթիվ են 'ԱՎԵ ԿԱՄ 'ԱՎԵ և ապա օգնիր, ոգորմյա, հիշիր, փրկիր, ընդունիր... շարագրանքով արձանագրութիւնները նույնն է 'Ս ԻՅՍ. ՇՍ ԱՂՍՍ և ապա օգնիր, ոգորմյա, հիշիր, փրկիր, ընդունիր... արձանագրութիւնների շարագրանքը:

6 Բայց, իհարկե, խաչի բարեխոսութեան այս դեպքերը հանդիպում են ընթացված խաչերի ստիթով:

7 Անշուշտ, ինչպես տեսանք, Տիրատուրը ևս անուն է, որը վաղ շրջանում միայն մեկ անգամ է հիշատակված, իսկ հետագայում՝ XIII դարում:

8 Տե՛ս Հայերեն անձնանունների բառարան, 1, էջ 155—156:

9 Նույն տեղում, էջ 156:

10 A. K. Sanjian. Anasias Vardapet's List of Armenian Monasteries in Seventh-Century Jerusalem.—Le Museon 82. 3—4 (1969), 265—29.

11 Վաղ շրջանի աղբյուրներում բազմիցս հիշատակվում է Անաստաս անվամբ VIII դարի ստավամարտեր: Տե՛ս Գ ար Ե ղ ի ն Ա Հ ո վ և փ յ ա ն. Հիշատակարանք ձեռագրաց. հ. Ա (ե դար մինչև 1250), Անթիլիաս, 1951, սյուն. 656 և այլ աղբյուրներ:

մեծարված ոտոր էր և հունարեն արձանագրություններից կամ պատմական աղբյուրներից մեզ հայտնի չէ: Առաջին հանդամանքը դժվար է պատկերացնել այն առումով, որ «Անաստաս» ձեր այդ շրջանում հայերի մոտ հաճախ է հանդիպում, իսկ նրա «Հարություն» ձևով հայերենի թարգմանությունը 700 տարի, անգամ ավելի, չի հանդիպում: Հունարեն անվան հայերենի մեկուսի թարգմանության որևէ այլ օրինակ մեզ հայտնի չէ, ոչ էլ այսպիսի թարգմանություն որևէ շարժառիթ¹²:

Այսպիսով, երկու մեկնաբանություններն էլ որոշակի բարդություններ են ներկայացնում, որոնց մեծ մասը մեր արամադրության առկա եղած նյութերի հիմամբ չի կարող լուծվել: Տվյալ պահին, թեև փոքր ինչ վարանումով, հենվելով փորձի վրա, նախընտրեցինք «սուրբ հարություն» մեկնաբանումը:

Մակագրության (graffito) պատմական կոնսևատր

Այս նմուշը նրուսաղեմի ցայսօր հայտնի հայկական մակագրություններից հնագույնն է: Հայոց պատրիարքարանի արձանագրություններից ոչ մեկը այսչափ հին չէ, հնագույնը թվագրվում է X կամ XI դարերով¹³: նրուսաղեմի հայոց ամենավաղ նշանակալի հուշարձաններից են խճանկար հատակներն ու երկու տապանաքար: Խճանկարները հայտնաբերվել են երկու հիմնական գոտիներում, մեկը՝ քաղաքի արևելյան մասում, Ձիթենյայ լեռան լանջին: Եսա խճանկարներ տահպանվել են Ձիթենյայ լեռան Ռուսաց եկեղեցու տիրույթում և հայտնի են XIX դարի վերջերից: Պետք է ենթադրել, որ մեր թվարկության առաջի հազարամյակի կեսերից այստեղ գոյություն են ունեցել հայկական բազմաթիվ շինություններ:

Խճանկար հատակների երկրորդ գոտին, ներառյալ հռչակապ «Բողնի խճանկարը», գտնվել է Դամասկոսյան դարպասի հյուսիսային կողմում, Մուսարար թաղամասում: Այն զգալի հեռավորության վրա է գտնվում Ձիթենյայ լեռան համայնից և իրենից պետք է ներկայացնի հայկական բնակավայրի մեկ այլ գոտի¹⁴: Հավանական է, որ այն ս. Ստեփանոս նախավայրի վերելմանի շուրջ գոյացած բնդարձակ քրիստոնեական արվարձանի մաս էր կազմում, ուր գոմիներկյաններն առ այսօր վանք ունեն¹⁵: Այս դատում է, որ

¹² Հայկական այլ աղբյուրների անվանարանական տվյալների բնությունը պատկերը չի փոխում: Մենք ստուգեցինք բառ Մ. Աղավնունու նրուսաղեմի հայոց նաղաղիտական նմուշները (Մ. Աղավնունու Միարանը և այցելուր հայ նրուսաղեմի. նրուսաղեմ, 1929): նրուսաղեմի Հայոց պատրիարքության՝ ն. Պողարյանի ձևագրացուցակի ցանկերը. մինչև XIII դ. 9. Հովսեփյանի և Ա. Մաթևոսյանի հայերեն հիշատակարանների հավաքածուն, Մատենադարանի ձևագրերի ցուցակի և Վիեննայի Մխիթարյանների դրագարանի ձևագրերի ցուցակի հատորները: Այս աղբյուրներից և ոչ մեկը մինչև XIV դարը Հարություն անունը չի հիշատակում, մինչդեռ Անաստասն այդ շրջանում դորձածուծից զուրս էր եկել:

¹³ Մ. Հակոբ հայոց Մայր եկեղեցու վաղ շրջանի պատմության վերաբերյալ տե՛ս Ջ. Պրատերի մեկնաբանությունները (The Armenians in Jerusalem: under the Cross: *Armenian and Biblical Studies* ed. M. E. Stone. Jerusalem, 1976, 289): Տճդի ամենավաղ բնակավայրերն ուսումնասիրել են Գ. Բահաթն ու Մ. Բոռչին («Hal aivot bagan HaArmeni», Kadmoniot—19—20) (1973) 102—103 (երբայերեն): Քաղաքի այս դատու պատմության վերաբերյալ զգալի է հետագա դրականությունը, ուր սակայն այս հարցերը քննության չեն առնվում:

¹⁴ Քաղկեդոնի մոդոլին հաջորդած շրջանում հայկական բնակավայրերի վերականգնման փորձերի մասին տե՛ս Ջ. Պրատերի նշվ. աշխ., էջ 228—229.

¹⁵ Այս դատում, Դամասկոսի դարպասի հյուսիսային կողմում, պեղումներ են կատարվել վերջին տասնամյակի առաջին կեսին: Մույն պեղումների արդյունքների մասին շուտով սպասվելիք հրատարակումը զգալի յույս կսփոխի շրջանի քրիստոնեական բնակավայրի կառուցների վրա: ներկայումս տե՛ս Michael Stone and David Amit, *New Armenian Inscriptions from Jerusalem*. *Cathedra* April (1997). 27—44 (երբայերեն), որտեղ ներկայացված է Եվստաթիոսի խճանկարի հնագիտական համապատկերը, էջ 28—37:

1991—1992 թթ. հայտնաբերվեց հայերեն արձանագրությամբ խճանկարված հատակ, Խճանկարի շաղախի մեջ գտնված գրամի հիման վրա և հնագիտական այլ դիտարկումների լույսի ներքո հատակը պետք է թվագրվի VII դարի երկրորդ կեսով, նույն տեղում, ոչ ուշ, քան VI դարով թվագրվող հնագիտական շերտում, գտնվել են հայերեն արձանագրությամբ երկու գերեզմանաբարձ¹⁶, Թերես, Անաստաս վարդապետի հայոց եկեղեցիների ու վանքերի ցուցակը չի ամփոփում հայկական բնակավայրերի այս երկու գոտիների պատկերը: Այնուհանդերձ, այս բնորոշակ հայկական կենտրոնների ղոյություն մասին տեղա հնագիտական ապացույցները սե՛ծ կաբերություն և ներկայացնում նորա հայտնաբերումների շեքհիվ շարունակվում ևս ավելանալ Երուսաղեմում հայոց ներկայությունը փաստող վկայությունների: Հետագայում կարող է ավելին սպասվել:

Մինչ լեռան Դավթի գերեզմանի մոտ գտնվող Խայֆայի Տան շրջանի հետ հայերի ունեցած առնչությունը ևս, թվում է, շատ հիս պետք է լինի, թեև ներկայիս տեսանելի շինություններից և ոչ մեկը չի կարող հավակնել հնագույն լինելու¹⁷, Վկայություն կա նաև Դավթի աշտարակի մոտ գտնվող մոսավորապես 438 թ. հիմնված և Մինաս կուսանոցի վերաբերյալ: 1165 թ. գերմանացի մի ճանապարհորդ հիշատակում է, որ Դավթի աշտարակի (Միջնարկի) մոտ հայ վանականներ էին ապրում¹⁸: Հրատարակվող արձանագրության գտնվելու վայրն ավելի մոտ է սրանց, քան Մուսարաֆին կամ Ձիթենյաց լեռանը: Այնուամենայնիվ, եթե է. Շուքրունը և Ռ. Ռեյչը իրավացի են շինությանը լեռային կոհակի, ապա այս արձանագրությունը հավանաբար կատարվել է ուխտավորի ձևերով և ոչ հայ տեղաբնակի՝ հոգևորական կամ աշխարհական:

Հարկ է նաև նշել, որ մեկ այլ հողվածում մենք ցույց ենք ավել, որ Եվստաթիոսի VII դարի խճանկար ունեցող վանքային համալիրը բնակեցված էր և՛ հույներով, և՛ հայերով: Այս իրողությունը միակը չէր:

Հայկական հնագույն մակագրությունը Երուսաղեմից

„Rock Inscriptions and Graffiti project“ կատարվում Երուսաղեմի հայերեն բաղամաթիվ արձանագրություններ ևն ընդգրկված¹⁹, Գրանք կենտրոնացված են սրբավայրերում, ինչպես նաև սուրբ Հակոբ Մայր տաճարի և ներկայիս հայկական թաղամասի այլ եկեղեցիների շուրջ: Դասելով հնագրական ու որսամական ավյալներից, նրանք բոլորն էլ ավելի ուշ ժամանակաշրջանի ևս պատկանում, քան վերոբերյալ արձանագրությունը: Ուստի, Յաֆայի դարպասի մոտ եղածը Երուսաղեմի հայկական հնագույն ուխտավորական մակագրությունն է: Այսու մենք հավաքել ենք դեպի Երուսաղեմ ձեռնարկած հայոց ուխտագնացությանը վերաբերող բաղամաթիվ վկայություններ²⁰, Վաղ քրիստոնեական ժամանակներից սկսած առ այսօր հայ ճանապարհորդների շարժը (ուղերթը) վկայագրված է թե՛ պատմական աղբյուրներով և թե՛ ուխտավորական արձանագրություններով: Սուրբ Երկրի նկատմամբ տածած հայոց այս պատկառանքի և առանձնակի նվիրման համատեքստում մենք պետք է նոր մղում տեսնենք:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ջ. Պրոսկեր, *Եղվ. աշխ.*, էջ 229:

¹⁸ Նույն տեղում, էջ 231:

¹⁹ M. E. Stone. The Rock Inscriptions and Graffiti Project, Catalogue of Inscriptions, v. 1—3: Inscriptions 1—8500. Atlanta, 1992—3.

²⁰ M. E. Stone. Holy Land Pilgrimage of Armenians before the Arab Conquest.—Revue Biblique 43 (1986), 93—110.

Հնագրական դիտարկումներ

Արձանագրութեան գրչութիւնը, ինչպէս նշվեց վերևում, հարկ է գնահատել մակագրութեան և ոչ VII դարի կանոնավոր արձանագրութիւնների շախմատի շղթայի, ինչպիսին է էջմիածնի Ս. Հովհաննէս Եկեղեցու Կոմիտասի արձանագրութիւնը (618 թ.): Այս առումով նորահայտը կարող է իրավամբ համեմատվել Սինուի արձանագրութիւնների և Տ. Գոյումջյանի հրատարակութեան պատրաստած հայկական մագաղաթների գրչութեան հետ²¹, Այս միջոցին այդ համեմատութիւնները մանրամասնորեն քննութեան առնելը նպատակահարմար չէ, քանզի սպասում ենք մագաղաթների հրատարակութեանը, Բավական է նշել, որ արձանագրութիւնը նմուշ է ոչ կանոնավոր (informal) եզակի գրչութեան (երկաթագիր): Խորապէս համոզված ենք, որ հայկական հնագրական այլոմի հրատարակութիւնից հետո, հայ հնագրագետների առջև կանգնած հաջորդ կարևոր խնդիրը կլինի հայերեն ոչ կանոնավոր գրչութեան ձևադրների հետազոտումն ու քննութիւնը²²: Ուստի այս արձանագրութեան բոլոր հնագրագիտական արժարժումները նախընտրում ենք թողնել ապագային:

Անգլերէնից թարգմանեց
Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

ДРЕВНЕЙШАЯ АРМЯНСКАЯ ПИЛИГРИМНАЯ НАДПИСЬ
ИЗ ИЕРУСАЛИМА

ՄԱՅՔԼ ՏՕՍՄ (Իերուսալիմ)

Р е з ю м е

Надпись обнаружена у Яффинских врат в 1996/7 гг. Археологи полагают, что находящееся вне городских стен сооружение предназначалось для приема пилигримов. Состоит она из 4-х строк и высечена на плите размером 12,5×5,7см. Надпись гласит: «Господи, помилуй Тиратури и святого Арутюна помини». Трудно сказать, Арутюн—это имя святого, обращение к храму Воскресения или перевод греч. Анастасия?! Надпись датируется периодом до середины VII в. и представляет несомненный палеографический интерес.

²¹ Dickran Kouymjian. *Armenian Paleography: a reassessment*, Scribes et manuscrits du Moyen-Orient, eds. François Déroche, and Francis Richard, Paris, 1997, 178—188.

²² M. E. Stone. D. Kouymjian and H. Lehmann. *Album of Armenian Paleography*, Aarhus. *Տպագրութեան ձևը է.*